ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ

Պապոյան Վ. Ռ. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

vpapoyan@ysu.am

Զուրաբյան Ա. Մ. (Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան)

zurabyan1@gmail.com

Ներկայացման ամս. 20.01.2021

Գրախոսման ամս. 28.03.2021

Տպագրության ընդունման ամս. 17.04.2021

Հոդվածում ներկայացված է աշխատանքային միջավայրի փոփոխման կոնտեքստում անձի հոգեբանական անվտանգության ապահովման հիմնախնդրի կառուցվածքը: Մանրամասն մեկնաբանվում են աշխատանքային միջավայրում անձի հոգեբանական անվտանգության կառուցվածքային բաղադրիչները և անձ–արտաքին միջավայր հակամարտության դիտարկումը մակրո և միկրո միջավայրերի սահմաններում: Տեսական վերլուծության արդյունքում մանրամասն ընդգծվում է հոգեբանական անվտանգության, հոգեբանական առողջության, անձի ուղղվածության, օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլման և հուզական բաղադրիչի միջև կապը՝ պարզաբանելով վտանգի ձևավորման հիմքերը: Աշխատանքային միջավայրի և անվտանգության հոգեբանական կողմի հետ զուգահեռներ տանելիս անձնային մակարդակում բացահայտվում են աշխատանքային պայմանների հարաբերական ընդհանրությունները:

DOI: *https://doi.org/10.46991/SBMP/2021.4.1.090*

Հանգուցային բառեր՝ *հոգեբանական անվտանգություն, աշխատանքային միջավայր, կենսագործունեության պայմաններ, հեռահար աշխատանքային մոդել, անձի ուղղվածություն:*

Անձի հիմնախնդրի ուսումնասիրվածության մակարդակը և անձի դիտարկումը, որպես բարդ և ամբողջական օբյեկտ, հետազոտական դաշտում հասկացությունների և երևույթների միջև նոր կապերի ձևավորման հիմք է ստեղծում, որը անձի հոգեբանական անվտանգության ուսումնասիրման ժամանակ հետազոտողի ուշադրությունը կենտրոնացնում է կոնցեպտուալ պատկերացումների շրջանակի երկու հիմնական բևեռների վրա և մի կողմից հնարավորություն է տալիս հիմնվել մարդու հոգեբանական կառուցվածքի միջավայրային պայմանավորվածության վրա, իսկ մյուս կողմից դիտարկել

անձի ներքին էության առաջնահերթությունը, քանի որ անձի մեկուսացված ուսումնասիրման մոտեցումը կտա միակողմանի արդյունքներ [4, էջ 11] :

Ինչպես, հղում տալով Ֆելդշտեյնին, նշում է Բաևան մարդու և միջավայրի միջև պայքարը ներկայիս պայմաններում ձեռք է բերում նոր կոնտեքստ, իսկ արդիականացումը պայմանավորված է ժամանակակից սուբյեկտի զարգացվածության աստիճանով, որը իր հերթին հարմարեցնում, կազմակերպում և վերարտադրում է իր միջավայրի տարբեր մակարդակները [4, էջ 12]:

Հաշվի առնելով միջավայր հասկացության բազմակողմանիությունը և ծավալային (միկրո և մակրո) տարբերությունները, նպատակահարմար է ուսումնասիրել «մարդ-մարդ» անմիջնորդ տեսակի աշխատանքային միջավայրը իր գործիքակազմով և առանձնահատկություններով, հոգեբանական տեսանկյունից պարզաբանել աշխատանքային նոր (միջնորդավորված) միջավայրում անձի վտանգվածության մակարդակը:

Իհարկե մարդկության պատմության մեջ արվել են մի շարք փորձեր անվտանգության գործակցի բարձրացման և պահպանման համար, և կարելի է հստակ նշել, որ ապահով միջավայրի ստեղծման վերջին փորձը եղել է պետություն հասկացության ձևավորումը, որին համատեղ առաջացել է պետության անվտանգության ապահովումը, որը հիմնաքար է հանդիսանում կայուն դինամիկ զարգացման և արդյունավետ գործունեության համար:

Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման տարածվածությունը, ոչ կայուն քաղաքական և տնտեսական վիճակը, համավարակային ռեժիմի առկայությունը և միաժամանակ այդ ամենի հոգեբանական ազդեցությունը ևս մի անգամ ամրապնդում են անձի հոգեբանական անվտանգության խնդրի արդիականությունը, որը հիմք ընդունելով, ժամանակակից հոգեբանները նշում են, որ անվտանգությունը համակարգերի զարգացման բազային պահանջ է հանդիսանում [2, էջ 43]:

Դիտարկումները վկայում են այն մասին, որ նորաստեղծ թվային համակարգերը իրենց զարգացման ընթացքում անցնում են հասարակության մեջ ինտեգրման մի շարք փուլեր, առաջին հերթին, հոգեբանական տեսանկյունից բազային պահանջմունքների շարքի վրա հիմնվելով նշանակալի դեր է ունենում անվտանգության ապահովումը, ինչը անհատների համար ստեղծում է գործելու, զարգանալու և ստեղծագործելու ապահով, գրեթե ամենուր հասանելի, առցանց միկրոմիջավայր: Իհարկե, այս կոնտեքստում անհրաժեշտ է հստակ սահմանել անվտանգություն հասկացությունը քանի, որ այն բավականին բազմաբովանդակ է:

«Անվտանգության» հարցը ունեցել է զարգացման բավականին մեծ շրջան՝ սկսած Հին Արևելքից և միջին դարերից մինչև մեր օրերը [10, էջ 3], իսկ հոգեբանության մեջ տվյալ հարցի շուրջ իրենց տեսանկյունը ներկայացրել են մի շարք դպրոցների ներկայացուցիչներ, որոնց շնորհիվ ոչ միայն

ձևավորվել է հոգեբանության նոր ճյուղ, այլ նաև նախագծվել են տվյալ ուղղության զարգացման հեռանկարները [10, էջ 5]:

Մակրո և միկրո միջավայրերի կոնտեքստում դիտարկումներ իրականացնելով առանձնացվում են մի շարք սահմանումներ, որոնցից որպես մակրո միջավայրի հասկացություն անվտանգությունը դիտարկվում է ներքին և արտաքին վտանգներից անձի, հասարակության և պետության կենսական նշանակալի շահերի պաշտպանումը, իսկ որպես միկրո միջավայրի հասկացություն, մեր կողմից առանձնացվում է Կոլեսնիկովայի սահմանումը, ըստ որի անվտանգությունը մեկնաբանվում է որպես արտաքին ազդեցությունից, անձի կամքին և ցանկությանը հակառակ վերջինիս հոգեբանական վիճակների, բնութագրերի և վարքի փոփոխման գործընթացի կասեցումը [9, էջ 15]:

Վերոնշյալի ակնառու օրինակներ մենք հանդիպում ենք ամենուր, ինչպես աշխատանքային միջավայրում, այնպես էլ, գուցե նաև կրկնակի անգամ ավելին, առօրյա անցուդարձում, որոնց մեջ ամուր ինտեգրվում են առցանց համակարգերը, բարձրացնելով առօրյա գործունեության ինտենսիվությունը, ստեղծում լարված միջավայր, ինչն էլ հանդիսանում է հոգեբանական վիճակների, բնութագրերի և վարքի փոփոխման նախապայման:

Հիմք ընդունելով Կոլեսնիկովայի սահմանումը և Բաևայի կողմից տրվող միջավայրի նկարագրությունը անվտանգ վիճակը բնութագրվում է ներկայից բավարարվածությամբ, ապագայի նկատմամբ վստահությամբ, կյանքի ընթացքում դրված նպատակների հասանելիությամբ, շահերի, դիրքերի, իդեալների, արժեքների պաշտպանվածությամբ [2, էջ 45]:

Ուշադրությունը կենտրոնացնենք անձի մոտիվացիոն-իմաստային վերաբերմունքի վրա, որին հստակ ուղղվածություն է տալիս սուբյեկտի սոցիալական դիրքը (ինչը արտահայտվում է իր կողմից վտանգվածության/անվտանգության վիճակի նկատմամբ անհանգստությամբ) անհատական առանձնահատկությունները և օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլման հանգամանքը, որոնք հանդիսանում են արտակարգ (վտանգ պարունակող) իրավիճակի սուբյեկտիվ մեկնաբանման պատճառ [2, էջ 45], ինչը հոգեբանական վնաս հասցնելու պոտենցիալ ունեցող իրավիճակի և հոգեհուզական ազդեցության հետ մեկտեղ կարող է բերել աշխատունակության նվազման, հոգեկան գործունեության խանգարման, իսկ հատուկ դեպքերում լուրջ հոգեբանական խանգարումների [5, էջ 34]: Այս ամենից ելնելով մեր վերլուծության կոնտեքստում հարկ է ուշադրությունը կենտրոնացնել աշխատանքի սուբյեկտի կողմից օբյեկտիվ իրականության արտացոլման բնույթին, ձևին և դինամիկային, որոնք մասնագիտական գործունեության մեջ բնորոշում են այդ արտացոլման կոնկրետ տեսակներ:

Մանրամասն չանդրադառնալով արտացոլման տեսակները բնորոշող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններին և կենտրոնանալով Կլիմովի կողմից առաջարկված աշխատանքի հոգեբանական «հատկանիշներին», որոնք անձի

ուղղվածության կոնտեքստում օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլման շրջանակում ձևավորվելով ազդեցություն են ունենում անձի հոգեբանական առողջության վրա, ինչը իր հերթին փոփոխում է անձի հոգեբանական անվտանգության ցուցանիշը: Որպես աշխատանքի հոգեբանական «հատկանիշներ» Կլիմովն առանձնացնում է չորս հիմնական հատկանիշ, որոնց շարքին են դասվում.

- աշխատանքի արդյունքների սոցիալական արժեքի գիտակցման անհրաժեշտությունը, որի կառուցվածքային բաղադրիչներ են աշխատանքի արդյունքներին ներկայացվող պահանջների իմացությունը, կանխատեսվող արդյունքների սոցիալական արժեքի իմացությունը, գործունեության վերաբերյալ աշխատանքի սուբյեկտի հուզական դրսևորումները և դրանց համապատասխանությունը նրա պատկերացումներին և գիտելիքներին:
- տրված նորմերում հանձնարարված աշխատանքի կատարման պարտավորվածությունը, որի կառուցվածքային բաղադրիչներ են հստակ տրված չափանիշներով աշխատանքի կատարման անհրաժեշտության գիտակցման և պատասխանատվության մակարդակի գնահատումը, աշխատանքի սուբյեկտի հուզական վիճակի և գիտակցվածության մակարդակի համարժեքության գնահատումը
- մասնագիտական նպատակներին հասնելու գործիքների և միջոցների գիտակցված կիրառումը, որը ձևավորվում է մասնագիտական գործունեության իրականացման տեսական և մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացվածության մակարդակի հիման վրա:
- միջանձնային հարաբերությունների գիտակցում: Տվյալ հատկանիշի մակարդակների գնահատումն իրականացվում է աշխատանքի սուբյեկտի կողմից հասարակության նյութական արժեքների ստեղծման գործում այլ անձանց ունեցած ավանդի իմացության և ընկալման խորության հիման վրա, որոնք նա օգտագործում է իր մասնագիտական գործունեության մեջ՝ նոր հասարակական նշանակություն ունեցող արժեքներ ստեղծելու նպատակով [8, էջ 14-15]:

Կարող ենք ասել, որ մի շարք կազմակերպություններ իրենց գործունեությունը ավելի արդյունավետ դարձնելու համար ներդնում են նախագծերի մշակման, զարգացման և խնդիրների բաշխման համակարգեր: Ներկայիս պայմաններից ելնելով վերոնշյալի կազմակերպման համար օգտագործվում են տարաբնույթ համակարգեր և գնահատման չափորոշիչներ, որոնք տեսականորեն հնարավորություն են տալիս աշխատակիցներին, ոչ միայն իմաստավորել իրենց աշխատանքը, այլ նաև մոտիվացնել աշխատակցին, ինչը անվտանգության տեսանկյունից ստեղծում է անձի համար զարգացման հեռանկարներ ունեցող միջավայր:

Որպես վերոնշյալի լրացում, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև հուզական մասնիկի առկայությանը, քանի որ հանդիսանալով հոգեբանական առողջության, իսկ վերջինս իր հերթին հոգեբանական անվտանգության կառուցվածքային բաղադրիչ, մարդու համար կարող է հանդիսանալ վտանգների դեմ պայքարի համար անհրաժեշտ ներքին ռեսուրսների առկայության կամ բացակայության ցուցանիշ: Հոգեբանական անվտանգությունը և անվտանգությունը առհասարակ առաջնային կապ ունեն դրական և բացասական հույզերի ինտեռնալիզացիայի և էքստեռնալիզացիայի հետ, որտեղ դրական հույզերի ազդեցությունը չի ավարտվում միայն տառապանքների կանխմամբ, այլ հանդիսանում է բուֆերային (անվտանգ) և սթրեսի դեմ պայքարելու համար անհրաժեշտ գոտու ստեղծմանը նպաստող ուժ [6, էջ 50]:

Ընդհանրացնելով վերոնշյալ հատկանիշների բովանդակային իմաստը և հստակ ամրապնդելով հոգեբանական անվտանգության, հոգեբանական առողջության, անձի ուղղվածության, օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլման և հուզական բաղադրիչի (վերոնշյալները հանդիսանում են ներքին աշխարհի կառուցողական մասնիկներ) միջև կապը, մեր կողմից առանձնացնում է առցանց միջավայրում գործող նորմայի սահմաններում բնութագրվող ներքին աշխարհ ունեցող անձի հոգեբանական առողջության բնութագիր հանդիսացող չափանիշներ.

- «ԵՍ»-ի ինքնիրացում – հոգեկանի և ֆիզիկականի գործընթացային ներառում:
- Ֆունկցիոնալ ռեսուրսներ, ինչը կանխորոշում է իրավիճակային փոփոխությունների հարմարման գործընթացը:
- Աշխատանքային գործընթացների դասակարգումը, կառավարումը և նախագծումը համաձայն անձնային ուղղվածությունների:
- Հուզական ռեակցիաների համապատասխանությունը միջավայրային ազդեցությունների, սոցիալական պայմանների ու իրավիճակների հանդեպ:
- Միջավայրային առանձնահատկություններին համաձայն վարքային դրսևորումների կառավարումը:
- Սեփական կենսագործունեության պլանավորում և կյանքի իմաստային ձևակերպում:

Վերոնշյալը իմաստավորելու և կոնտեքստային ուղղահայացներ տանելու համար անհրաժեշտ է նաև դիտարկել աշխատանքային միջավայր հասկացության բովանդակությունը: Ըստ Դուշկովի, Սմիռնովի, Կոռոլյովի՝ աշխատանքային միջավայրը դա արտաքին միջավայրի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, սոցիալ-հոգեբանական և էսթետիկ գործոնների ամբողջությունն է, որը ազդում է աշխատանքի սուբյեկտի վրա: Աշխատանքային միջավայրի գործոնների նորմավորման դեպքում առանձնացնում են.

- Հարմարավետ աշխատանքային միջավայր – մարդու աշխատունակության օպտիմալ դինամիկայի, լավ ինքնազգացողության ապահովում, առողջության պահպանում:
- Հարաբերական անհանգիստ աշխատանքային միջավայր – ապահովում է անհրաժեշտ աշխատունակություն, բայց մարդու մոտ առաջացնում է տհաճ սուբյեկտիվ զգացողություններ և ֆունկցիոնալ փոփոխություններ, որոնք չնայած գտնվում են նորմայի սահմաններում:
- Ծայրահեղ (էքստրեմալ) աշխատանքային միջավայր – բերում է աշխատունակության մակարդակի իջեցման և բերում է ֆունկցիոնալ, բայց պաթոլոգիկ հետևանքներ չունեցող փոփոխությունների (նորմայից դուրս):
- Գերծայրահեղ աշխատանքային միջավայր - բերում է օրգանիզմում պաթոլոգիկ փոփոխությունների և ստեղծում է աշխատանքային պարտականությունների իրականացման անհնարինություն [7, էջ 523] :

Իհարկե վերոնշյալ կատեգորիաները վերաբերվում են նաև թվային միջավայրին, ինչը դիտարկվելով որպես ունիվերսալ գործիք, որոշների համար հանդիսանում է յուրօրինակ սուբյեկտիվ զգացողությունների և ֆունկցիոնալ փոփոխությունների աղբյուր:

Մի կողմ դնելով առկա առցանց աշխատանքային համակարգերի մշակվածության հարցը, հստակ նկատվում է անձնային առանձնահատկությունների պայքար, պայքար առցանց հարմարավետ աշխատանքային միջավայրի կամ UX/UI և դասական միջավայրի միջև, որտեղ գերակշռող դեր է տրվում միջանձնային շփմանը:

Եթե փորձենք դիտարկել աշխատանքային միջավայրը մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներում (ընտանիք, առողջություն,աշխատանք, ընկերներ), մասնագիտական գործունեությունը կարող է հանդիսանալ այն իմաստի աղբյուրը, որը օգնում է մարդուն հաղթահարել իր առջև ծառացած խնդիրները [3, էջ 191]: Բայց մանրամասն ուսումնասիրելով կենսագործունեության այլ ոլորտների նկարագրերը և որպես մակարդակների փոխկապակցվածության մեխանիզմ ընդունելով Մասլոուի բուրգի մոդելը (ըստ Մասլուի՝ հիմնային ֆիզիոլոգիական պահանջների բավարարումը առաջ է բերում հոգեբանական և ֆիզիոլոգիական անվտանգության ապահովման պահանջմունքը), կարելի է ենթադրել, որ անձի հոգեբանական անվտանգությունը ոչ թե սահմանափակվում է ընտանեկան, ընկերական կամ առողջական շրջանակներով, այլ ձևավորում է փոխլրացնող համակարգ, որը իր հերթին ունենում է համակարգային ազդեցություն [1, էջ 89]:

Ձերծ մնալով կենսագործունեության շրջանակների փոխկապակցվածության հարցի մեկնաբանությունից, հարկ է ուշադրությունը սևեռել անձի հոգեբանական անվտանգության վրա աշխատանքային միջավայրի թողած ազդեցությանը: Մի շարք ուսումնասիրությունների շրջանակներում հեղինակները

կարևորում են ինչպես տեխնիկական կանոնների հետևելու հանգամանքը, այնպես էլ հոգեբանական անվտանգության զգացողության պահպանումը: Այս ամենի հետ մեկտեղ կարևորվում է նաև համագործակցության և ուսման հնարավորությունը, ինչի շուրջ Կարկը և Քարմելին նշում են, որ հոգեբանական անվտանգությունը կարող է հանդես գալ ստեղծագործականության, կենսունակության զգացողության և մտածողության ապահով խթան: Այդ հանգամանքների առաջնագծում նշանակալի տեղ է գրավում նաև ղեկավարման մոդելի հանգամանքը, որը իր ազդեցությունը ունենալով միջավայրի վրա աշխատակիցներին հնարավորություն է տալիս թուլացնել իրենց պաշտպանական մեխանիզմները և ակտիվացնել ստեղծագործական կարողությունները [3, էջ 195]:

Եզրակացություն: Դիտարկելով հոգեբանական անվտանգ միջավայրի ստեղծման մեջ վերոնշյալ բաղադրիչների ունեցած ազդեցությունը և համաճարակային իրավիճակում բազմակողմանի թվայնացումը, հարկ է նշել, որ թվային գործիքների զարգացումը և շուկայում այլընտրանքային տարբերակների առկայությունը բավականին ամուր հիմք են ստեղծում արտասահմանյան կազմակերպությունների համար, անձի հոգեբանական անվտանգությունը կարևորելով, հեռահար աշխատանքային մոդելի որդեգրման համար:

Արտասահմանյան կազմակերպությունների մենեջմենթի ներկայացուցիչների կարծիքների և մոտեցումների վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ կազմակերպական մշակույթի թարմացումները հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ օգտագործել հեռահար մոտեցումը աշխատանքային միջավայրում, ինչն իր հերթին ուղիղ կապ ունի համագործակցային միջավայրի պահպանման հետ: Իհարկե ղեկավարման գործընթացների իրականացումը հեռահար գործունեության ընթացքում ստացել է լուրջ մարտահրավերներ, բայց ըստ արտասահմանյան կազմակերպությունների փորձի ուսումնասիրման և հեռանկարների դիտարկման կառավարման ոլորտը սկսել է ակտիվ օգտագործել նորագույն տեխնոլոգիաները կազմակերպելով ոչ միայն փաստաթղթավարության, այլև աշխատակիցների գործունեության մոնիթորինգի և անընդմեջ կապի պահպանման գործառույթները :

Համեմատականներ տանելով ՀՀ-ում գործող կազմակերպությունները կարելի է ասել, որ միանգամայն պատրաստ չեն իրադարձությունների նմանատիպ զարգացմանը, կտրուկ փոփոխմանը: Դրա մասին է վկայում առցանց աշխատանքային միջավայրում նեռարվածության ցածր մակարդակը, աշխատակիցների հմտությունների ցուցանիշը (խոսքը վերաբերվում է առցանց համակարգերից օգտվելու հանգամանքին), նոր միջավայր տեղափոխվելու հետ կապված սթրեսային ապրումները, հուզական անհավասարակշռվածություն առաջացնող հանգամանքները:

Այսպիսով, կարելի է ասել, որ անձի հոգեբանական անվտանգության տեսանկյունից աշխատանքային միջավայրի, կամ գրաֆիկի փոփոխման

ազդեցությունը արտահայտվում է երկբևեռ (դրական և բացասական) ցուցանիշներով: Ներկայիս պայմաններում հնարավոր չէ միանշանակ փաստել հոգեբանական հարաբերական անվտանգ վիճակի փոփոխման վրա աշխատանքի հոգեբանական հատկանիշների, աշխատանքային փոփոխված միջավայրի կամ հոգեբանական առողջության չափանիշների մեջ համատեքստային փոփոխությունների ազդեցությունը:

Աշխատանքային միջավայրը, որտեղ աշխատակիցը կարող է գործել, բավարարել իր առօրյա պահանջմունքները դա նախ և առաջ հոգեբանական անվտանգ պայմաններն են, որը հանդիսանում է համակարգի տարրերի ամբողջականության պահպանման հիմնական օղակ, որի անտեսումը միջնորդավորված ազդեցություն կթողնի աշխատակցի անձի զարգացման, մոտիվացվածության, ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա:

Տեսական վերլուծության արդյունքներին հիմնվելով և կարևորելով հարցի արդիականությունը անհրաժեշտ է նշել ընտրված թեմատիկայի շրջանակներում լրացուցիչ հոգեբանական հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ. Վ., Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Մուրադյան Ե. Բ., Սարգսյան Դ. Յ., Ամիրյան Ծ. Ս.** Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն // կոլեկտիվ մենագրություն// Եր., ԵՊՀ հրատ., 2015, 142 էջ:
2. **Агузумцян Р. В., Мурадян Е. Б.** Психологические аспекты безопасности личности: Вестник практической психологии образования №1 (18) январь-март 2009 с. 43.
3. Актуальные проблемы психологии труда, инженерной психологии и эргономики. Выпуск 8 / Под ред. А. А. Обознова, А. Л. Журавлева. – М.: Изд-во «Институт психологии РАН», 2018. –с. 191, 568 с.
4. **Баева И. А.** Психологическая безопасность в образовании: Санкт-Петербург, изд. СОЮЗ, 2002.
5. **Григоренко М. М.** - Безопасность жизнедеятельности: Учебное пособие – изд-во СПбГУЭФ, 2008. с" 34, 112 с.
6. **Донцова А. И.** Психологическая безопасность личности; 2019 URL: https://studme.org/314030/psihologiya/bezopasnost_chuvstvo_emotsiya (17.01.2021).
7. **Душков Б. А., Смирнов Б. А., Королев А. В.** Психология труда, профессиональной, информационной и организационной деятельности: Словарь/Под ред. Б.А. Душкова; прил. Т.А. Гришиной.-3-е изд.-М.: Академический Проект: Фонд «Мир», 2005. с. 523, 848 с.

8. **Иванова Е. М.** Основы психологического изучения профессиональной деятельности, Издательство Московского университета, 1987, ИБ № 246, 207с.
9. **Колесникова Т. И.** Психологический мир личности и его безопасность. М.: Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2001, 30 с. (Психология безопасности и успеха).
10. **Пирмагомедова Э. А.** Социально-психологические аспекты безопасности жизнедеятельности как сфера субъектных представлений// Психология и педагогика: методика и проблемы практического применения. 2012. №25-1.,с. 119. URL: https://cyberleninka.ru/article/n/sotsialno-psihologicheskie-aspekty-bezopasnosti-zhiznedeyatelnosti-kak-sfera-subektnyh-predstavleniy (дата обращения: 12.01.2021).

ПСИХОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ ЛИЧНОСТИ В КОНТЕКСТЕ ИЗМЕНЕНИЯ РАБОЧЕЙ СРЕДЫ

Папоян В. Р. (ЕГУ, Ереван, Армения)

Зурабян А. М. (ЕГУ, Ереван, Армения)

В статье расскрывается структура основной проблемы психологической безопасности личности в контексте изменения рабочей среды. Детально интерпретируются структурные элементы психологической безопасности личности в пределах макро и микро-среды, проводится изучение конфликта человек с внешней средой. В результате теоретического анализа с разъяснением основ формирования опасности тщательно подчеркивается связь между психологической безопасностью, психологическим здоровьем, направленностью личности, субъективным отражением объективной реальности и эмоциональным компонентом. Проводя параллели между рабочей средой и психологической стороной безопасности на личном уровне раскрываются относительные общие черты между различными условиями трудовой деятельности.

Ключевые слова: *психологическая безопасность, рабочая среда, условия жизнедеятельности, удаленная рабочая модель, направленность личности.*

THE PERSONAL PSYCHOLOGICAL SECURITY IN THE CONTEXT OF THE WORK ENVIRONMENT CHANGES

Papoyan V. R. (YSU, Yerevan, Armenia)

Zurabyan A. M. (YSU, Yerevan, Armenia)

The structure of the problem of personal psychological security insurance in the context of the work environment changes is presented in the article. The structural components of the person's psychological security in the work environment are interpreted in detail and the observation of the conflict between person and external environment in margins of macro and microenvironments. In the result of the theoretical analysis, the connection between psychological security, psychological health, personal orientation, the subjective reflection of objective reality, and emotional component is emphasized in details clarifying the basis of the shape of the danger. Relative commonalities of the work conditions are revealed at the personal level when parallels are drawn between the work environment and the psychological side of the security.

Keywords: *psychological safety, working environment, living conditions, remote working model, personality orientation.*